ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՒԵՐԻ ԳԻՇԻ 60-ԲԵԼԵԱՆԸ

Այսօր, կիրակի, հոկտ. 13-ին, Էջմիածնում առ. ժ. 9-ին Մայր-Տաճարի Իջման Սեղանի վրա կը կատարուի հանդիսաւոր պատարագ և ապա հայրապետական մաղթանք։

Պատարագից յետոյ՝ ժ. 12-ին՝ Գէորգեան ճեմարանում տեղի կունենայ ցեղեկոյթ՝ երգեցողութեամբ և երաժշտութեամբ։

Ճաշի միջոցին՝ ժ. 3-ին՝ կը կարդացուին զանազան կոդմերից ստացած շնորհաւորական հեռագիրները։

Ապա երեկ. ժ. 7-ին, ինչպէս և վաղը, երկուշաբթի, հոկտ. 14-ին, առ. ժ. 10-ին ճեմարանում կը շարունակուին ուղղագրութեան խնդրի շուրջը տեղի ունեցող զրուցական բէֆէքտատներն և խորհրդակցութիւնը, որոնք սկսուեցին երէկ երեկոյեանից։

Վաղը և ճեմարանի բակում այսօր երեկոյեան—ինչպէս և երէկ՝ շաբաթ երեկոյ—տեղի կունենայ երաժշտութիւն և հրաւառութիւն։

—

Այսօր, կիրակի, հոկտ. 13-ին, ռուսահայ թեմերի բոլոր եկեղեցիներում տեղի կունենան հանդիսաւոր պատարագներ և հայրապետական մաղթանքներ։ Ապա՝ տեղական պաշտօնեաներն նայած՝ կը կազմակերպուին զրական և երաժշտական ցեղեկոյթներ կամ երեկոյթներ, եկեղեցական, կրթական և այլ ազգային հաստատութիւնների պաշտօնատար անձանց մասնակցութեամբ ուներկայութեամբ։ Հանդէսները կը բացուին «Հայր-մեր»-ով և ս. Թարգմանչաց կամ Էջմիածնի շարականով։

—

Ամերիկահայերի ազգասիրութիւնը դիմել է «Մշակ»ի խմբագիր Ալ. Քալանթարին, Հ. Աւաքեանին, ինչպէս և Կարապետ Եպիսկոպոսին, խնդրելով որ սրանք, յօբելեանական նոր նեկայ տօնական աղաղակներ ի ժամանակ Էջմիածնում, պաշտօնապէս ներկայացնեն ամերիկահայութեան շնորհաւորանքները։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան հայ ծառայողները ուղարկեցին շնորհաւորական հեռագիր Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի անունով։

—

«Տիֆ. Листокъ» թերթի խմբագրութիւնը ուղարկել է Նորին Վեհափառութեանը այսպիսի հեռագիր. «Տիֆ. Листокъ»-ի խմբագրութիւնը խորին յարգանքով անկեղծ շնորհաւորանք է ուղարկում Ձերդ Վեհափառութեանը խմբագրութեան ամբողջ կազմի կողմից մեծայրագոյն կուլտուրական տօնի՝ հայկական այբուբենի և հայ տպագրութեան յօբելեանի ատիթով։

—

Տաճարի գիւտի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400-ամեակի ատիթով Թիֆլիսի Ցոյն Դրամատիկական Ընկերութեան նախագահ Ի. Գ. Բաստրիանցի կողմից Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսին ուղարկված է հետեւեալ շնորհաւորական հեռագիրը.

«Էջմիածին, Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսին.

«Ցոյն Դրամատիկ. Ընկերութեան վարչութեան անունից բերում եմ իմ սրտագին շնորհաւորանքը յանձին Ձեր Սրբութեան բազմասանջ հայ ազգին, որը քաղաքակրթութեան դրօշակը պահած ունենալով Արեւելքում մեծ Թուրանիզիմի ժամանակներից՝ այսօր տօնում է իր գիրի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի յօբելեանը։ Թող յուսնական «Ավետիսում» խօսքը, իբրև միջազգայնութիւն ստացած բան, ծառայէ որպէս կապ բոլոր ազգերի միջև միմեանցներ՝ համայն մարդկութիւնը քաղաքակրթելու գործին»։

—

Երէկ Թիֆլիսից ուղարկեցին Էջմիածին բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ Նորին Սրբութիւն Վեհի անունով։

—

Երէկ Էջմիածին մեկնեցին դարձեալ շատ պատգամաւորներ՝ համազգային մեծ տօնի հանդէսներին ներկայ լինելու։

—

Հայ գրերի և տպագրութեան կրկնակի յօբելեանների ատիթով Կովկ. Հայ. Հրատ. Ընկերը լոյս է ընծայել Ստեփանոս Նազարեանի երկերի 1 հատորը, որին որպէս առաջաբան կցված է հեղինակի կենսագրականը, որ գրել է Ն. Ադալեանն, և Նազարեանի նկարը։

Հատորը, որ բաղկացած է ԺԸ+428 էջից, տպված է խնամքով և արժէ 1 ր. 50 կ.